ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> ----------07----------2025թ. ՈՒՈ/717 -Ա

ք. Արմավիր

«ՎԱՆԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Սուսաննա Մուշեղյանի 2025 թվականի հուլիսի 21-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սուսաննա Մուշեղյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի օգոստոսի 1-ից սեպտեմբերի 4-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Սուսաննա Մուշեղյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հայկ Խաչիկյանին:
3. Սուսաննա Մուշեղյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 5-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-22 17:49:59 GMT+4
Հավաստված է ԷԻԵՆՊ-ի կողմից

Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ